ԿԱՐՃԻՔ

Մեր Ֆրանգուլյանի «Հարկային ծառայողների գործունեության գնահատման համակարգի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ ներկայացված՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Շուկայական հարաբերությունների ձևավորման պայմաններում ՀՀ սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումներն առաջադրեցին գործնական և տեսական բնույթի բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծմանն ուղղված մոտեցումներն ու մշակումներն, առաջին հերթին, հետապնդում էին երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումների համակարգվածության և արդյունավետության ապահովման նպատակ: Բարեփոխումների կարևորագույն խնդիրներից մեկը, թերևս, պետք է համարել կենտրոնացված ֆինանսական ռեսուրսների հավաքագրման հարցը, քանի որ պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ միջոցների ստեղծման հիմնական աղբյուր են հանդիսանում հարկային մուտքերը:

Նշենք, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները ցույց տվեցին, որ գլոբալացման պայմաններում տնտեսական հարաբերությունների կարգավորման, հանրապետության տնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման և, որ ամենակարևորն է, պետական գործառույթների պատշաճ և լիարժեք իրականացման համար ձևավորված կառուցակարգերն ու հարկային լծակները դեռևս չեն բավարարում շուկայական տնտեսության ժամանակակից պահանջներին: Մասնավորապես, պետական ֆինանսական համակարգի ցածր արդյունավետությունը, ստվերային տնտեսության զգալի ծավալները, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության գոյություն ունեցող մակարդակը, հարկային բեռի անհամաչափ բաշխումը, հարկային հարաբերությունների կարգավորման օրենսդրական անկատարությունը և տնտեսական զարգացման ժամանակակից միտումները պահանջում են նորովի իմաստավորել դեռևս կենսունակ ու առաջացած նոր մարտահրավերներ, որոնց դիմակայելու համար անհրաժեշտ է հարկային համակարգի համալիր վերափոխումների իրականացում և արդիականացում:

Անկախացումից հետո ՀՀ կարևորագույն խնդիրներից և տնտեսական մարտահրավեր է հանդիսացել և դեռ հանդիսանում է հարկային արդյունավետ համակարգի ձևավորումը:

Համակարգ, որի գործունեությունը առավելագույնս կնպաստի հարկահավաքման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու ստվերային տնտեսության կրճատմանը ՀՀ-ում:

Չնայած հարկային համակարգի ձևավորումից ի վեր ներդրվել են բազմաթիվ համակարգեր, այնուամենայնիվ հարկային համակարգում բարեփոխումները արդիական են, անընդհատ և շարունակական բարեփոխումների կարիք ունեն: Հարկային արդյունավետ համակարգի ձևավորումը հանդիսանում է կարևորագույն հիմնախնդիր, ինչի համար անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել և վերլուծել ՀՀ հարկային մարմնի ռազմավարությունները, գնահատել ներդրված համակարգերի արդյունավետությունը՝ առաջարկելով հարկային բարեփոխումների ուղղություններ:

ՀՀ-ում հարկերը կազմում են պետական բյուջեի եկամուտների շուրջ 95%-ը, ուստի արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու և հարկային բարեփոխումներ իրականացնելու համար՝ շատ կարևոր է հասկանալ հարկային համակարգում կառավարման խորքային խնդիրներն ու դրանց լուծման հնարավորությունները:

Այս տեսանկյունից կարևոր դեր ու նշանակություն ունեն հարկային ծառայողների գործառույթների գնահատման հարցերի ուսումնասիրությունը: Դեռ ավելին, հարկային ծառայողների գործառույթների գնահատման համակարգի ձևավորումը այժմեական է և այդ համակարգի ձևավորումից է ինչ-որ չափով կախված արդյունավետ հարկային համակարգի: Սրանով էլ պայմանավորված է թեմայի հրատապությունը և արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակ է սահմանվել՝ ձևավորել հարկային ծառայողների գործունեության գնահատման հայեցակարգ և նախանշել վերջինիս այն ուղղությունները, որոնց կիրառմամբ կմեծանա հարկային համակարգի կառավարման արդյունավետությունը: Հետազոտության նպատակից են բխում հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել հարկային ծառայողների գործառույթների իրականացումը,
- ✓ բացահայտել հարկային ծառայողների կողմից իրենց գործառույթների իրականացման ժամանակ առաջացող խնդիրները,
- ✓ բացահայտել հարկային ծառայողների գործառույթների գնահատման և հարկային համակարգի արդյունավետության կապը, մշակել հարկային մարմնի վարքագծային նոր մոդելներ,
- ✓ բացահայտել հարկային ծառայողների անարդյունավետ գնահատման կամ գնահատման բացակայության հետևանքները, մշակել գնահատման նոր մեխանիզմ,

- ✓ հիմնավորել հարկային ծառայողների գործառույթների գնահատման հայեցակարգի անհրաժեշտությունը, դերն ու նշանակությունը արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու գործում,
- ✓ մշակել հարկային ծառայողների գործառույթների գնահատման հայեցակարգի հիմնական ուղղությունները,
- ✓ նկարագրել հարկային ծառայողների գործառույթների գնահատման հայեցակարգի ակնկալվող արդյունքները և դրանց չափելիությունը:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտն է ՀՀ հարկային ծառայողի գործունեությունը: Հետազոտության առարկան հարկային ծառայողների գործառույթների գնահատման հիմնախնդիրներն ու գործառույթների գնահատման համակարգի ազդեցությունը հարկային համակարգի կառավարման վրա:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը

Ատենախոսությունում առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության, կառավարման, ֆինանսական կառավարման, իրավագիտության ժամանակակից տեսությունների հիմնական դրույթները, մեթոդները, մոդելները, հայեցակարգերը, հարկային համակարգում տեղի ունեցող բարեփոխումները, հայ և արտասահմանյան հեղինակների կողմից հարկային համակարգի կառավարման և բարեփոխումների բնագավառում կատարված ուսումնասիրությունները, հարկային հարաբերությունները կարգավորող օրենքները, օրենսդրական ակտերն ու ՀՀ կառավարության որոշումները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում հրապարակված հաշվետվությունները, ՀՀ ՊԵԿ ռազմավարությունները, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) և Համաշխարհային բանկի հրապարակումներն ու տեղեկագրերը, ՀՀ ՊԵԿ նախագահի հրամանները և ՀՀ ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված տեղեկատվական նյութերն ու տվյալները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, տնտեսաչափական, համադրությունների, համեմատությունների, վերլուծությունների, գրաֆիկական մեթոդներն ու մոդելները:

Ատենախոսության գիտական նորույթը

Աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ, հատկապես, կարևորվում են հետևյալները.

1. Հարկային մարմնի գործառույթների գնահատման նպատակով որպես հարկային ծառայողների աշխատանքի գնահատման պարտադիր պայմաններ բացահայտվել են հարկային ծառայողների աշխատանքի գնահատման հիմնական սկզբունքները, մշակվել է հարկային մարմնի գործունեության հայեցակարգը և դրա ուղղությունները:
2. Հարկային մարմնի գործունեության հայեցակարգով մշակվել են ստվերային տնտեսության գնահատման և կրճատման գործառույթներ, որոնց իրականացումը պետք է միտված լինի հարկային մարմնի առաքելության իրականացմանը:
3. Մշակվել է հարկային մարմնի կառավարման կազմակերպաիրավական նոր կառուցվածք, որի հիմքում դրվել է նախագծային կառուցվածքի մոդելը:
4. Առաջարկվել են հարկային մարմնի կառավարչական վարքագծի նոր մոդելներ, որոնք բնութագրում են հարկային մարմնի վարքագիծը՝ հարկային ծառայողներին գործառույթներ պատվիրակելիս, այսինքն, օգտագործելով այդ մոդելները հարկային մարմինը վարքագծային առանձին մոտեցումներ պետք է ցուցաբերի աշխատողներից յուրաքանչյուրի նկատմամբ՝ կոնկրետ աշխատանք հանձնարարելով այն հարկային ծառայողներին, ովքեր իրենց վարքագծային տեսանկյունից առավել ամբողջական են համապատասխանում տվյալ աշխատանքի պահանջներին:
5. Հարկային ծառայողների աշխատանքի գնահատման նպատակով գործող գնահատման մեխանիզմների փոխարեն մշակվել է գնահատման նոր մեխանիզմ, որի հիմքում ոչ թե հարկային ծառայողների պարգևատրումն է և քանակական գնահատականները, այլ հարկային ծառայողների աշխատանքի գնահատումը՝ կոնկրետ գործառույթին աշխատողի համապատասխանությամբ, հակառակ պարագայում՝ անհամապատասխանության պատճառների բացահայտումը: Արդյունքում անհրաժեշտ է վերապատրաստել հարկային ծառայողին, պատվիրակել գործառույթը կամ վերաձևակերպել այն:

Աշխատանքի գործնական նշանակությունը

Ատենախոսությունն համակարգված գիտական ուսումնասիրություն է, որում դիտարկված հիմնահարցերը, կատարված վերլուծությունները և առաջարկվող լուծումները կարող են օգտակար լինել հարկային մարմնի կառավարման խնդիրների լուծման, հարկային ծառայողների գործառույթների գնահատման, հարկային քաղաքականության

կատարելագործման, արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու համար: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության կողմից տնտեսական քաղաքականության մշակման և հարկային բարեփոխումների նախաձեռման, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից հարկային հարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենսդրահիրավական հիմքերի ձևավորման ժամանակ:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է հանրապետության տնտեսության զարգացման արդի փուլում հարկային արդյունավետ համակարգի, հարկային բարեփոխումների շարունակականության ապահովման, իրավական դաշտի հետագա կատարելագործման անհրաժեշտությամբ: Գիտական արդյունքները և գործնական առաջարկությունները կարող են օգտակար լինել նաև հարկային վարչարարության իրականացմանն ու հարկային համակարգի ձևավորմանն առնչվող ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման և այդ բնագավառի մասնագետներ պատրաստելու համար:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ

1. Գլուխ 1-ում ատենախոսը անդրադարձել է հարկային եկամուտների և ՀՆԱ-ի աճին: Վերլուծություն և եզրակացություն է կատարել, սակայն տվյալ վերլուծությունը ավելի խորը լինելու համար ատենախոսն պետք է անդրադառնար նաև համաշխարհային ճգնաժամի խնդրին, այլ փոխարենը շեշտը դրել է միայն հարկային վարչարարության ռազմավարության և հարկային աշխատակիցների թերացումների վրա:
2. Աշխատանքում ներկայացվում է հարկային ծառայողի գործառույթների որակական հատկանիշների գնահատման անհնարինության և սուբյեկտիվության մասին, սակայն առաջարկած հայեցակարգում տեղ է գտել որակի գնահատումը, սակայն չի ներկայացվում գնահատման մոդել: Այս կոնտեքստում կարևոր է ունենալ կոնկրետ գնահատման առաջարկվող սանդղակ:
3. Աշխատանքում խոսվում է ստվերային տնտեսության մասին, սակայն չեն բացատրվում գործունեության տեսակները, որոնք հեղինակը համարում է բարձր ստվերայնության աստիճան ունեցող, ինչպես նաև ստվերային տնտեսության մասին խոսելիս անդրադարձ չի կատարվել սույն թվականի հուլիսի 1-ի կանխիկով շրջանառության սահմանափակումների և հետևանքների մասին («Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենք ՀՕ-12-Ն ուժի մեջ մտած 01.07.2022), թե որքանով այն կարող է դրական ազդեցություն ունենալ վերջինիս կրճատման վրա:

4. Աշխատանքի 1.3 ենթագլխում «հարկային մարմնի գործառույթների արդյունավետ գնահատման համակարգը պետք է հնարավորություն տա մեծացնել հարկային համակարգի ճկունությունը՝ հարկահավաքման գործընթացի հիմքում դնելով հարկային մարմնի գործառույթների կատարելագործումը՝ հարկային օրենքների և հարկերի դրույքաչափերի պարբերաբար փոփոխման փոխարեն»: Հարկային օրենքների և դրույքաչափերը անտեսելով՝ հեղինակը շեշտը դնում է միայն հարկային մարմինների գործառույթների կատարելագործման վրա: Ստացվում է, որ նույնիսկ եթե հարկերի տոկոսադրույքները լինեն շատ բարձր, հարկային մարմնի գործառույթների կատարելագործման միջոցով կարելի է հարկահավաքման գործընթացը արդյունավետ կազմակերպել: Այստեղ կարծում եմ աշխատանքը կշահեր եթե զուգահեռներ անցկացվեր և դիտվեր բազմակողմանիորեն:
5. Էջեր 46-50-ում ներկայացվում են հարկային ծառայողի աշխատանքի գնահատման 2020թ., 2021թ.-ի չափանիշների մասին: Սակայն հարկային ծառայողի գնահատման ցուցանիշների մասով ամփոփման հղումը հին տարեթվով նյութի է: Աշխատանքում ներկայացված են որոշ աղյուսակներ, որտեղ 2019-2021թ. տվյալները ցույց է տրված որպես կանխատեսում (էջ 17):
6. Հայեցակարգի մշակման փուլերից մեկում ներկայացվում է հարկային ծառայողների աշխատանքի արտադրողականությունը: Այստեղ հարկային աշխատողի հոգեբանության ուսումնասիրության անհրաժեշտություն ևս կա և այսպիսի վերլուծություններով դժվար է պնդել, որ բոլոր աշխատակիցները նախաձեռնող են, և նրանց աշխատանքի արտադրողականությունը կընկնի, եթե գիտակցեն, որ իրենք կատարող են: Այստեղ կախված հոգեբանությունից կարող են առկա լինել տարբեր կոորիլացիոն կապեր, որոնց վերլուծությունը աշխատանքը կդարձներ ավելի արժեքավոր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն արժեզրկում, այլ հետապնդում են աշխատանքում քննարկված հիմնախնդիրների մեթոդաբանական հիմքերի բարելավմանը:

Ատենախոսության վերլուծություններն ու եզրահանգումներն ունեն ինչպես տեսական ու մեթոդաբանական, այնպես էլ գործնական նշանակություն:

Աշխատանքը գիտական պատշաճ մակարդակով կատարված ավարտուն աշխատանք է: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները արտացոլված են սեղմագրում և հեղինակի գիտական հրապարակումներում:

Մեր Ֆրանգուլյանի «Հարկային ծառայողների գործունեության գնահատման համակարգի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը, ներկայացված՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարումե մասնագիտությամբ, համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ մասնագիտական խորհրդի որոշմամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ

«Սմարթ Սիթի Դիվելոփեր»ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն

Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ Ս. Վ. Հարությունյան

12 դեկտեմբերի 2022թ.